Մրցույթ՝ « ՀՀ Արարատի մարզի Խաչփարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՝

դասվար (19 դասաժամ), դասվար (18 դասաժամ), դասվար (19 դասաժամ), աշխարհագրություն(16դասաժամ),բնագիտություն (2 դասաժամ), բնություն (2 դասաժամ), տեխնոլոգիա(տղաների խումբ՝ 3 դասաժամ), երաժշտություն (2 դասաժամ), ֆիզիկա (16 դասաժամ), հասարակագիտություն (9 դասաժամ), կենսաբանություն (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (ձև 1),
-1 լուսանկար 3x4 չափի ,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ. **նոյեմբերի 29-ից** մինչև **դեկտեմբերի 8-ը** ներառյալ ,ամեն օր՝ ժամը **10:00-ից 15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023թ. դեկտեմբերի 12-ին՝ ժամը 14:30-ին**, Խաչփարի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գ. Խաչփար, 5-րդ փող. 15շ.: Տեղեկությունների համար զանգահարել 055131211 հեռախոսահամարով: